

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 15.06.2021թ. թիվ 2112869316 որոշումը բեկանելու և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու, իսկ 15.06.2021թ. թիվ 2112867775 որոշման հիմքում դրված փաստական հանգամանքների դեմ բերված գանգատն առանց բավարարման թողնելու մասին

<< 20 >> 07 2021թ. 7-13 14202

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Ալիկ Արայի Խաչատրյանի ՄԴ/57567-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի Արցախի փողոցի 23 շենքի 106 բնակարանի բնակիչ Ալիկ Արայի Խաչատրյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 15.06.2021թ. թիվ 2112869316 և 15.06.2021թ. թիվ 2112867775 որոշումներից մեկը՝ նշելով, որ դրանք կայացվել են նույն իրավախախտման համար:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 286-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ալիկ Արայի Խաչատրյանը ճանաչվել է որպես իրավախախտում կատարած անձ, ուստի նրա կողմից ներկայացված գանգատը ենթակա է քննության:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 15.06.2021թ. թիվ 2112869316 որոշումը ենթակա է բեկանման, իսկ 15.06.2021թ. թիվ 2112867775 որոշումը կատարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հադվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 36-րդ մասի համաձայն՝ ճանապարհային նշանների պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում,

երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 15.06.2021թ. թիվ 2112867775 որոշման հիմքում դրված տեսանյութը փաստում է, որ <<MERCEDES-BENZ>> մակնիշի 35XF585 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը 27.05.2021թ. ժամը 18:31-ին Երևան քաղաքի Դեղատան փողոցի հատվածում խախտել է << կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշմամբ սահմանված 3.1' <<Մուտքն արգելվում է>> ճանապարհային նշանի պահանջը, ինչը չի կատարվել երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

Այսպիսով, դիմումատուի արարքում ակնհայտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի զանցակազր, հետևաբար նրան վարչական պատասխանատվության ենթարկելու մասին 15.06.2021թ. թիվ 2112867775 որոշումն իրավաչափ է և օրինական:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 15.06.2021թ. թիվ 2112869316 որոշման հիմքում դրված տեսանյութը համադրելով 15.06.2021թ. թիվ 2112867775 որոշման հիմքում դրված տեսանյութի հետ պարզվել է, որ տրանսպորտային միջոցի վարորդը նույն օրը, նույն ժամին, նույն տեղում, կատարել է նույն արարքը:

Այսպիսով, ակնհայտ է, որ նույն իրավախախտման համար կայացվել է երկու որոշում, ուստի 15.06.2021թ. թիվ 2112869316 որոշումը ենթակա է բեկանման, քանի որ այն հանդիսանում է տեխնիկական վրիպակի արդյունք:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 286-րդ հոդվածի 1-ին մասով և 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 15.06.2021թ. թիվ 2112869316 որոշումը բեկանել և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճել:
2. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 15.06.2021թ. թիվ 2112867775 որոշման հիմքում դրված փաստական հանգամանքների դեմ բերված գանգատը թողնել առանց բավարարման:
3. Հանձնարարել ՏՄՀԻՎԳՔ բաժնին, Ալիկ Արայի Խաչատրյանի անվամբ կայացնել նոր վարչական ակտ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել << վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
5. Սույն որոշման օրինակն ուղարկել Ալիկ Արայի Խաչատրյանին և ՃՈ ՏՄՀԻՎԳՔ բաժնի:

